

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻ ԱՌԱԿԻ ՄԻՋՍԶԳԱՅԻՆ ԶՈՒԳԱԼԵՌՆԵՐԸ

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս է. Մ. ԶՐԱՇՅԱՆ

Ժողովրդական բանահյուսության և գրականության զարգացման ընթացքում (երբ, մանավանդ, այդ զարգացումը դիտվում է ժամանակի մեծ կտրվածքով) այնքան բազմապիսի ներքին կապեր և ընդհանրություններ են գոյանում, որ պարզապես անհնար է որևէ գիտական գասակարգմամբ սպառնիչ կերպով ընդգրկել: Այնուամենայնիվ, ժամանակակից համեմատական գրականագիտությունը սովորաբար առանձնացնում է գրական առնչությունների մի քանի հիմնական տեսակներ, որոնք օգնում են գեթ ընդհանուր ձևով կողմնորոշվելու փաստերի վիթխարի քանակության մեջ: Հիշեցնենք գրական փոխներգործության գլխավոր ձևերը:

Դրական երևույթների միջև լինում են, նախ, ուղղակի հարաբերություններ կամ կոնտակտային կապեր, որոնք դրսևորվում են ազդեցության և փոխառումների, գնահատականների և թարգմանությունների ձևով: Իսկ երբ գրական մի երևույթ ազդում է կյանքի է կոչում մեկ այլ գրողի, ավելի ճիշտ՝ օգնում է նրան գտնելու իր ստեղծագործական ուժերի արտահայտման լավագույն ուղին, այդ դեպքում մենք գործ ունենք կախման հարաբերությունների կամ ծագումնաբանական կապերի հետ: Վերջապես, ժամանակով ու տարածությամբ տարբեր հեղափոխության վրա գտնվող գրական փաստերի միջև իրարից անկախ կարող են երևան գալ մոտիվների և գաղափարների, ժանրային և արտահայտչական ձևերի ընդհանուր գծեր, իբրև համանման հասարակական և գեղարվեստական նախադրյալների արդյունք: Դրանք այսպես կոչված տիպաբանական ընդհանրություններն են:

Սակայն գրական կապերի այս հիմնական տեսակները հաճախ հանդես են գալիս նաև համադրված, իրարը ձևերով, երբ մեկը, երկրորդն ու երրորդը միահյուսվում են, և դժվար է ասել, թե որտեղ է վերջանում ուղղակի ազդեցությունը կամ փոխառությունը, և որտեղից է սկսվում օբյեկտիվ տիպաբանական ընդհանրությունը: Նման բազմաշերտ և բազմանիստ կապերը բնորոշ են հատկապես այնպիսի բանահյուսական ժանրերի, ինչպես էպոսը, հեքիաթը, առակը, որոնք սովորաբար ձևավորվել ու գոյատևել են դարերի ընթացքում՝ ազդալին և միջազգային գեղարվեստական արժեքների ակտիվ փոխներգործության մթնոլորտում: Նախապես ստեղծվելով ազգային կոնկրետ հիմքի վրա, դրանք տարբեր ուղիներով ներառնում են նաև այլ ժողովուրդների ստեղծած արժեքները, և նրանց մեջ անխզելիորեն միաձուլվում են ազգային ու միջազգայինը, սեփականն ու փոխառյալը:

Տեղին ենք համարում այս կապակցությամբ վերհիշել Հովհ. Թումանյանի մի շատ կարևոր դրույթ մեր ազգային էպոսի վերաբերյալ. «Հայկական էպոսն էլ թեև պատմական տարրեր ունի իր մեջը,—գրել է բանաստեղծը 1921 թ.,—թեև իր մեջ ամփոփում է հայ ժողովրդի մեծ մաքառումներն ու մեծ իդեալները, բայց ամենից առաջ նա մի հանրամարդկային ստեղծագործություն է, դուրսագնական ու սիմվոլիկ, մի հավաքական գործ, որի վրա աշխատել են ոչ միայն որոշ ազգի անհատներ, այլև բոլոր ազգերը—իրեն անհատներով»:

328—333): Իսկ այդ ձեռագիրը, ինչպես նա մանրամասնորեն բացատրում է իր աշխատության առաջին՝ ամենից ընդարձակ մասում (հրատարակված, սակայն, ամենից վերջինը՝ 1899 թ.), կազմվել է Վարդան Այգեկցուց շուրջ մեկ հարյուրամյակ հետո՝ XIV դարի սկզբին (1316 թ. ոչ ուշ)⁴։ Այդ ժողովածուն վերնագրված է «Քարոզգիրք» և պատկանում է ժամանակի նշանավոր գրական և հասարակական-կրոնական գործիչ Հովհաննես Ծրզնկացուն, որն ունեցել է նաև Մործորեցի մականունը (չպետք է շփոթել նրանից մի քանի տասնամյակ առաջ ապրած հռչակավոր գրող և մտածող Հովհաննես Ծրզնկացի-Պլուզի հետ)։ «Քարոզգիրքը» պարունակում է մոտ 30 առակ, որոնք այսպիսի ընդհանուր բնութագրող վերնագիր են ստացել. «Առակք ստեղծականք պիտանիք առնուլ ՚ի զրուցատրութիւնս և յասացուածս։ Արարեալ Յովհաննու Մործորեցույ» (այսինքն՝ «Հորինված առակներ, որոնք պիտանի կարող են լինել զրուցների և ճառերի ժամանակ։ Կազմեց Հովհաննես Մործորեցի»)։ Այս բնութագրությամբ մատնանշվում է ինչպես առակների հորինված-գեղարվեստական նկարագիրը, այնպես էլ նրանց գործնական-կիրառական նպատակադրումը⁵։

Բայց կենտրոնացնենք մեր խոսքը «Իշխան և ալրի» առակի վրա։ Ի՞նչ ծագում ունի այս բացառիկ սրամիտ և խորիմաստ պատմությունը, որի մեջ զարմանալիորեն դիպուկ արտահայտվել է հասարակ մարդկանց դժգոհությունը իշխանավորներից, այն գիտակցությունը, որ նրանց գործադրած ճնշումն ու դաժանությունը ժամանակի ընթացքում գնալով մեծանում են։ Այս հարցին մինչև այժմ ճշգրիտ պատասխան չի տրվել։ Ո՞չ Ն. Մառը և Հ. Օրբելին, ո՞չ էլ հայ միջնադարյան արձակի հետագա հետազոտողները տվյալ առակի որևէ աղբյուր, նրա ազգային կամ միջազգային որևէ զուգահեռ չեն նշել։ Այնինչ այս դեպքում ավելի քան-ակնառու է այն ընդհանուր օրինաչափությունը, ըստ որի առակի հիմքում դրված սեղմ ու դինամիկ սյուժեն, կայուն իմաստ ունեցող կերպարները, խոր ընդհանրացումներն ու բարոյախոսությունը անցել են մի ազգային միջավայրից մյուսը, պահպանել են իրենց կենսունակությունը դարերի ընթացքում։ Ամեն մի ժողովուրդ և՛ ինքն է ստեղծել առակային-ալլաբանական սյուժեներ, և՛ վերցրել է ուրիշներից՝ հաճախ վերաիմաստավորելով իր ազգային մտածողությանը համապատասխան։ Ահա թե ինչու շատ առակային մոտիվներ գրականության մեջ հարատևել են դարեր շարունակ՝ ուղեկցելով բազմաթիվ սերունդների։ Պատահական չէ, որ «Քափառիկ սյուժեների» գրականագիտական տեսությունները մեծ չափով հենվել են նաև առակագրության ժանրի տվյալների վրա։

«Իշխան և ալրի» զրույցի մեջ բացակայում է առակի ժանրի ամենաբնորոշ հատկանիշը՝ ալլաբանությունը, կենդանիների և առարկաների միջոցով մարդկային արարքներ և բնավորություններ ցուցադրելու միտումը։ Իբրև գործող անձինք այստեղ մարդիկ են հանդես գալիս՝ իշխանն ու ալրի կինը, և ասելիքը ներկայացվում է անսքող, առանց ալլաբանական դիմակի։ Իր բացահայտ ու ցավագին ճշմարտախոսությամբ, դառը հեզմանքով այս զրույցը շատ հարազատ է մեր ազգային նկարագրին, կարծես յուրովի անդրադարձնում է մեր պատմական գոյության պայմանները։ Ահա թե ինչու այն դարերի ընթացքում տարածված է եղել մեր ժողովրդի մեջ, բանավոր հաղորդմամբ փոխանցվել է սերնդից սերունդ, դարձել է հարազատ ազգային գրական հուշարձան։

⁴ Մատենադարանի մայր ցուցակում՝ № 2189, էջ 193ա—202ա, վերնագրված. «Բանք պիտանիք և ոգեշահք ժողովեալք ի սուրբ գրոց առ ի խրատ մարդկանս»։

⁵ Н. Марр. Сборники притч Вардана, Материалы для истории средневековой армянской литературы. Часть I. Исследование, Санкт-Петербург, 1899, с. 70—75.

Զորոնեյով ուրիշ հնարավոր օրինակներ հայ միջնադարյան և նոր շրջանի բանահյուսության և գրականության մեջ, անդրադառնալով այն տարբերակին, որ գտնում ենք Հովհ. Թումանյանի գրական ժառանգության մեջ, ավելի ճիշտ՝ նրան վերաբերող հուշագրական նյութերում: Պողոս Մակինդյանը 1929 թ. տպագրած իր հոգվածում վկայել է, որ 1921 թ. մարտին՝ Վրաստանի խորհրդայնագումարի անմիջապես հետո, երկրի նոր ղեկավարության կողմից կազմակերպված մի հավաքի ժամանակ Թումանյանը, անխախտ սովորույթի համաձայն ընտրվելով սեղանի թամադա, իր առաջին իսկ խոսքի մեջ ռիմել է այս առակի օգնությանը և հետագայում այդ մասին պատմել է այսպես.

«Զոռեցին, Շատ շեմուշում արի, տակիցը շկարողացա դուրս պրծնեմ: Վերցրի առաջին բաժակն ու ասի՝ ձեր կենացը, բայց վրեն մի առակ պիտի պատմեմ: Լինում է չի լինում՝ մի թագավոր, Շատ վատն է լինում, ժողովուրդը սկսում է աղոթել, որ աստված դրա հողին առնի: Թագավորը վեր է ընկնում-մեռնում: Թախտի վրա սրա ժառանգն է նստում, հորից առավել շար ու դաժան, ժողովուրդը դարձյալ սկսում է աղոթել, որ աստված սրանից էլ աղատի: Սա էլ է վեր ընկնում-մեռնում: Գահ է բարձրանում սրա ժառանգը և շարունակում ու խստություն գերադնացում է հորը, էլ ուր մնաց թե պապին: Ժողովուրդն էստեղ խելքի է գալիս և աղոթում, որ աստված սրան երկար կյանք տա, խորհելով, որ սրանից հետո եկողը սրանից «բշտեթար» պիտի լինի...»⁶:

Դժվար չէ նկատել, որ Թումանյանի պատմածի մեջ, XIV դարում գրի առնված զրույցի համեմատությամբ, սյուժեն ավելի մանրամասնված է: Բացի այդ, այստեղ այրի կնոջ փոխարեն հանդես է գալիս ժողովրդի հավաքական հասկացությունը, իշխանի փոխարեն՝ թագավորը: Ավելացված է մի վերջաբան մարդկանց «խելքի գալու» մասին: Բայց նույնն է մնացել պատմության կորիզը՝ նրա հիմքում դրված պարագոքային իրավիճակը, երբ մարդիկ աղոթում են վատ իշխանի կամ թագավորի կյանքը երկարացնելու համար՝ վախենալով, որ նրա հաջորդն ավելի վատը կլինի:

Որտեղից է վերցրել Թումանյանն այս խորիմաստ և սրամիտ զրույցը: Բանաստեղծն, իհարկե, ծանոթ էր ն. Մառի աշխատությանը (նրա գրադարանում եղել են այդ հետազոտության երեք հատորները՝ մի քանի նշումներով): Սակայն, կարծում ենք, իր պատմած զրույցը նա քաղել է ոչ թե այդ աղբյուրից, այլ ժողովրդական բանահյուսության գիտարանից, որի անսպառ իմացության մասին վկայություններ բերելն ավելորդ է: Այսպիսով, XIV դարում Մործորեցու գրի առածը ավելի քան 600 տարի հարատևել է բանավոր ավանդույթի ձևով ու հասել է Թումանյանին, — լավագույն հաստատում այս զրույցի կենսունակության և հավերժական թարմության:

Պ. Մակինդյանի պատմած դրվագը և Թումանյանական ոճով շարադրված միջադեպին առակը արձագանքներ ունեցավ սփյուռքահայ գրականության մեջ: Այն իրավացիորեն մեկնաբանվեց իրրև բանաստեղծի քաղաքացիական խիզախության և իմաստության ապացույց: Դրանով նաև այս առակի տարածման, նրա արդիական բովանդակության ամրոնման նոր խթան է տրվում: Բերենք երկու օրինակ: Հովհ. Թումանյանի մահվան 10-ամյակի առթիվ գրած հոգվածում Արշակ Զամայանը ամբողջությամբ մեջ էր բերում Թումանյանի պատմած առակը՝ քաղելով «նոր ուղի» ամսագրից⁷: Նույն տեքստը, միայն մի երկու բառի փոփոխությամբ, գտնում ենք նաև 1936 թ. հրատարակված՝ Վարդգես Ահարոնյանի գրքում⁸, թեև այստեղ որևէ աղբյուր

6 Պ. Մակինդյան. Հովհաննես Թումանյան, — «Նոր ուղի», 1929, № 2—3, էջ 200:

7 Արշակ Զամայան. Ամենայն հայց բանաստեղծը. — «Վեմ», Փարիզ, 1933, Ա, էջ 26—27:

8 Վարդգես Ահարոնյան. Հովհաննես Թումանյան. Մարդը և բանաստեղծը. Բոստոն, 1936, էջ 176—177:

չի նշվում, բայց, անկասկած, զրույցը քաղված է Պ. Մակինցյանի հոդվածից (ուղղակի կամ Ա. Զամալյանի հրապարակման հիման վրա), քանի որ ինքը՝ Վ. Ահարոնյանը 1921 թ. գարնանը չէր կարող ո՛չ անձամբ ներկա լինել Թիֆլիսում բուլղարական ղեկավարության հրավիրած հավաքին, ո՛չ էլ բանաստեղծից անմիջապես լսել այդ մասին: Այդ ժամանակ նա կամ արդեն արտասահմանում էր կամ բռնել էր տարագրության ճանապարհը:

Սրանք Հովհաննես Երզնկացի-Մործորենցու գրի առած զրույցի մերձավոր՝ ներազդային արձագանքներն են, որոնք վկայում են նրա արտագրական բանավոր գոյատևման մասին: Այժմ անդրադառնանք այս առակի միջազգային զուգահեռներին, իհարկե, չձգտելով նյութի սպառիչ նկարագրության, որը պարզապես անհնար է:

Դեռ մի քանի տասնամյակ առաջ, զբաղվելով բալլադի ժանրի պատմության և տեսության հարցերով, ես հանդիպեցի մի ստեղծագործության, որն ուղղակի հիշեցնում է հայկական այս առակը, թեև պատմության մեջ կան ուրիշ երանգներ և սյուժետային մանրամասներ: Խոսքը վերաբերում է XIX դարի առաջին կեսի գերմանական հայտնի գրող (ծագումով ֆրանսիացի) Ադելերթ Շամիսոյի (1781—1838) «Այրի կնոջ աղոթքը» բանաստեղծությանը՝ գրված 1831 թ.: Նմանությունը առարկայորեն ցուցադրելու նպատակով մեջ բերենք այդ բանաստեղծության տողացի թարգմանությունը, որը մեր խնդրանքով կատարել է Ալբերտ Մուշեղյանը.

Այրի կնոջ աղոթքը
DAS GEBET DER WITWE

(Ըստ Մարտին Լութերի)

Պառավել արթուն աղոթում է մենակ
Ուշ գիշերին, ճրագի լույսի տակ.
«Մեր ողորմած տիրոջը, ո՛վ Տեր Աստված,
Շատ երկար կյանք տո՛ւր, քեզ շա՛տ եմ խնդրում,
Կարիքը սովորեցնում է աղոթել:

Ողորմած տերը լսում է նրա խոսքը,
Մտածում է, թե կինը երևի ցնորվել է.
Մտնում է ծանր ու մեծ նրա խղճուկ տունը
Եվ մտերմորեն հարցնում է մայրիկին՝
«Ինչպե՞ս է կարիքը սովորեցնում աղոթել:

«Ութ կով էր, տեր, իմ ունեցած-լուսնեցածը.
Ձեր պարոն պապը ծծեց մեր արյունը,
Կովերից ամենալավը վերցրեց իրեն
Եվ լճոգաց ալկա իմ մասին.
Կարիքը սովորեցնում է աղոթել:

Ես հիմարացա և անիծեցի նրան,
Մինչև որ Աստված ինձ պատժելու համար՝ լսեց իմ ձայնը,
Նա մեռավ, և իշխանության եկավ
Ձեր հայրը, որ խլեց իմ երկու կովը.
Կարիքը սովորեցնում է աղոթել:

Ես նրան ևս անիծեցի չար,
Եվ ինչպես որ անիծել էի՝ նա վիզը կտորեց.
Այնժամ Դուք եկաք տերության գլուխ
Եվ խլեցիք իմ շորս կովն իսկույն.
Կարիքը սովորեցնում է աղոթել:

Հիմի էլ, բան է, թե որ Զեր որդին գա,
 Կիսի, անշուշտ, իմ վերջին կովը.
 Մեր ողորմած տիրոջը, ո՞վ Տեր Աստված,
 Շատ երկար կյանք տո՛ւր, բեզ շա՛տ եմ խնդրում.
 Կարիքը սովորեցնում է աղոթելու»⁹

Անվիճելի է, որ հայկական առական ու Շամիսոյի բանաստեղծությունը ծագումնաբանորեն կապված են իրար հետ, թեև ոչ ուղղակի։ Նրանց միջև, վաստահորեն կարելի է ասել, եղել են միջանկյալ օղակներ, որոնք ընթացքն ու հարաբերությունը ճշգրտորեն պարզել հազիվ թե հնարավոր է։ Այդ օղակներից մեկը Մարտին Լութերի համապատասխան տեքստն է, որը վերաբերում է XVI դարի առաջին կեսին, այսինքն՝ գրվել է Մործորեցուց երկու դար հետո և Շամիսոյի բանաստեղծությունից երեք դար առաջ։

Նկատի առնելով Շամիսոյի բանաստեղծության ենթավերնագիրը՝ «Ըստ Մարտին Լութերի», անհրաժեշտ էր անպայման գտնել այն տեքստը, որից Շամիսոն ուղղակի քաղել է իր բալլադի գաղափարն ու սյուժեն։ Բայց պարզվեց, որ դա հեշտ խնդիր չէ։ Գերմանական ռեֆորմացիայի առաջնորդ, նշանավոր կրոնական և հասարակական գործիչ, աստվածաբան-փիլիսոփա և գրող Մարտին Լութերի (1483—1546) գրական ժառանգությունը անընդգրկելիորեն մեծ է։ Բավական է ասել, որ նրա երկերի ամբողջական հրատարակությունը, որն սկսվել է դեռևս 1883 թ. (այսպես կոչված Վայմարյան հրատարակություն) ու տավալին ավարտված չէ, արդեն 61 հատոր է պարունակում։ Հայտնի է նաև Լութերի հատուկ նախասիրությունը ժողովրդական գրականության այնպիսի տեսակների նկատմամբ, ինչպես առակը, զրույցը, անեկդոտը, որոնք նա օգտագործել է իր քարոզներում ու ճառերում՝ մտքին կենդանություն և համոզիչ ուժ հաղորդելու համար։ Այդ նպատակով նա հրատարակել է «Ընտիր առակներ Եզոպոսից», «Սեղանի շուրջ արված զրույցներ» (Tischreden) և այլ գրքեր։

«Այրի կնոջ աղոթքը», անշուշտ, պատկանել է առակների այդ շարքին։ Սակայն գտնել նրա հետքերը Մարտին Լութերի երկերում՝ մեզ երկար ժամանակ չէր հաջողվում, քանի որ Երևանի գլխավոր գրադարաններում անգամ նրա գործերի հրատարակությունների գրեթե չկան։ Եվ ես արդեն պատրաստ էի հաշտվելու այս առակի լութերյան տարբերակը չգտնելու մտքի հետ, որպեսզի չհանդիպեմ որոշումները, եթե շօտաբեր մի բարեբախտ պատահականություն։ Իմ ազգականներից մեկի տանը ես հանդիպեցի մի գրքի, որի գույքային բուն իսկ փաստը ինձ համար մեծ անակնկալ էր։ Դա 448 մեծագիր էջերից կազմված մի գիրք է, որի վերնագիրն է՝ «Մարտին Լութեր (մի բարեպաշտ մանականի ըմբոստությունը)», հեղինակ՝ Հակոբ Եպիսկոպոս Գրյունդյան։ Դիրքը գրված է արևելահայ լեզվով, հրատարակվել է Մոնտեվիդեոյում (Ուրուգվայ) բոլորովին վերջերս՝ 1994 թ.։ Ես, բնականաբար, անմիջապես ձեռքս վերցրի այդ գիրքը և մի քանի օր չէի բաժանվում փաստառատ և շատ հետաքրքիր շարադրված այդ աշխատությունից։ Սակայն ինձ հետաքրքրող հարցի մասին ես այնտեղ որևէ տեղեկություն չգտա։

Այդ պատճառով էլ միտք ծագեց ուղղակի դիմել Մոնտեվիդեո, Հակոբ Եպիսկոպոս Գրյունդյանին (բարեբախտաբար, գրքի այն օրինակի վրա, որն ընկել էր իմ ձեռքը, հեղինակը նշել է իր ուրուգվայական «կոոորդինատները»)։ Ես մի նամակ գրեցի նրան՝ բացատրելով բանի էությունը։ Եվ ահա ընդամենը մի քանի օրից իմ սեղանին էր այս առակի լութերյան շարադրանքը գերմաներեն բնագրով և հայերեն թարգմանությամբ։ Իսկ առևրկայորեն զգա-

⁹ Chamisso's Werke in 3 Teilen. Teil. I. Gedichte, S. 69—70. Համեմատության համար մատենանշեք նաև այս բանաստեղծության՝ և Գիսկոպոսի ոտներն թարգմանությունը (Исемецкие баллады. Составление И. Фрадкина. М., 1958, с. 121; А дельберт Ша-миссо. Избранное. М., 1974, с. 116—117.

ցի ժամանակակից տեխնիկայի հրաշքներից մեկը. մեկ շաբաթում աշխարհի մյուս ծայրից ինձ հասավ այն, ինչի համար դեռ մի քանի տարի առաջ շատ օրեր, գուցե ամիսներ պիտի պահանջվեին (ակամայից հիշեցի Զարենցի խոսքերը. «Ո՛ր, աշխարհը վաղուց է դարձել մի փոքրիկ, փոքրիկ փողոց»): Հրապարակավ շնորհակալություն եմ հայտնում գերաշնորհ տեր Հակոբ եպիսկոպոս Գրլճյանին այսքան բարեհաճ վերաբերմունքի համար և մեջ եմ բերում առակը նրա հայերեն թարգմանությամբ.

Այլի կնոջ աղոթքը

Պատմվում է մի այրի կնոջ մասին, որն ամենայն ջերմեռանդությամբ վեր էր կենում աղոթելու իր բռնավոր տիրոջ համար, որպեսզի Աստված կամենա նրան երկար կյանք շնորհել: Բռնավորը լսելով այս մասին՝ խիստ զարմանում է, քանի որ ինքը շատ լավ գիտեր, թե ինչքան վիշտ էր պատճառել այդ կնոջը, և թե նման մի աղոթք տարօրինակ էր: Արդարև բռնավորներին նվիրված սովորական աղոթքները այդպես չեն հնչում: Հետևաբար նա հարց է տալիս կնոջը, թե ինչու է նա իր համար աղոթում: Կինը պատասխանում է.

— Քո պապի ապրած ժամանակ ես ունեի տասը կով. նա խլեց մեզանից երկուսը: Ես աղոթք արեցի նրա դեմ, որպեսզի նա մեռնի և իշխանությունը անցնի քո հոր ձեռքը: Այդպես էլ եղավ, սակայն քո հայրն էլ խլեց ինձնից երեք կով: Ես նորից աղոթեցի, որպեսզի իշխանությունը անցնի քո ձեռքը և քո հայրը մեռնի: Դու էլ հիմա խլեցիր ինձնից չորս կով: Դրա համար էլ այժմ ես աղոթում եմ ի նպաստ քեզ, քանզի մտահոգ եմ, թե նա, ով քեզանից հետո է գալու, կխլի ինձնից իմ վերջին կովը, այն ամենը, ինչ որ մնացել է ինձ: 10.

Նախ, ուշադրություն դարձնենք այս զրույցի սկսվածքի վրա. «Պատմվում է մի այրի կնոջ մասին...»: Սա հիմք է տալիս ենթադրելու, որ Լութերն իր պատումը քաղել է ոչ թե որևէ գրավոր աղբյուրից, այլ տարածված ժողովրդական զրույցներից, որոնք շրջում էին և անցնում շուրթից շուրթ: Համեմատելով վերը բերված երկու բնագրերը, մենք տեսնում ենք, որ Շամիսոն բավական հավատարմորեն հետևել է Մարտին Լութերի շարադրանքին: Նա միայն փոխել է աչքու ունեցած և նրանից խլված կովերի թվաքանակը (տասի փոխարեն ութ և այլն), տների վրջում ավելացրել է «կարիքը սովորեցնում է աղոթել» կրկնեցը, իսկ Լութերի հիշատակած «բռնավորին» (der Tyrann) անվանել է «ողորմած տեր»:

Պետք է խոստովանեմ, որ Մարտին Լութերի բնագիրը ձեռք բերելուց հետո ինձ թվում էր, թե խնդրի փաստական կողմը դրանով սպառվում է: Շուտով պարզվեց, որ սխալվում եմ: Բարեբախտաբար, ես որոշեցի հոգևածը տպագրելուց առաջ այս թեմայի շուրջ հաղորդում անել գիտական շրջանում: Մանավանդ որ ծագեց մի շատ հարմար առիթ՝ մեր գիտությունների ակադեմիայի հումանիտար բաժանմունքի հրավիրած մեծ գիտաժողովը 1997 թ. հունիսի սկզբին՝ «Հայ միջնադարը» ընդհանուր թեմայով, նվիրված ակադեմիկոս Հովսեփ Օրբելու ծննդյան 110-ամյակին, մի գիտնականի, որի գրականագիտական հետաքրքրությունների մեջ տասնամյակներ շարունակ առաջատար տեղ է գրավել առակի ժանրը, հայ միջնադարյան առակների թարգմանության և մեկնաբանության խնդիրը: Զեկուցման քննարկման ժամանակ արվեցին շատ հետաքրքիր դիտողություններ, որոնք ես հաշվի եմ առել աշխատանքը խմբագրելիս: Հատկապես կարևոր էին միջնադարյան սրբախոսական և աշխարհիկ արձակի ճանաչված մասնագետ Քնարիկ Տեր-Դավթյանի առաջարկած լրացումները, որոնցից մենք շնորհակալությամբ օգտվում ենք: Այսպես, նա մատնանշեց, որ միջնադարյան հայ արձակում եղել է այս առակի ևս մեկ գրառում: Այն մտնում է «Բանք իմաստասիրաց, պիտանի ամենայն մարդու» ձեռագիր ժողովածուի մեջ, որը XVII դարում (ավելի ճշգրիտ՝ 1633 թ.) թարգմանել է (հավանաբար՝ լեհերենից) Զաքա-

¹⁰ Martin Luther. Sprüche, Aussprüche, Anekdoten. Berlin, 1983, S. 132.

րիա Բեռնատովիչը՝ լեհահայ հասարակական-կրոնական հայտնի գործիչ, հայերի կաթոլիկացման անհաշտ հակառակորդ¹¹։ Ահա մեզ հետաքրքրող զրույցի հայերեն թարգմանությունը, որը գտնում ենք «Բանք իմաստասիրաց» ժողովածուի մեջ։

Ղիմէոս Սիրազուզանու ծեր պառավ, երբ ամենայն սիրազուզանք վասն բռնավորութեան անիծանէին զտէրն իւրեանց, կամէին զի վաղվազակի սատակէր, և նա միայն ամեն առաւտու հայցէր յաստուծոյ նմա կենդանութիւն։ Վասն այն, երբ իմացաւ նա զայս, հարցանէր ի նմանէ, թէ.

— Վասն ի՞նչ պատճառի համար զայս առնես։

Յորում վասն այն այսպիսի հոտ պատասխանի.

— Երբ էի աղջիկ, ունէաք յայնժամ շար բռնաւոր, և խնդրէի յաստուծոյ, զի յոյժ վաղ-վաղակի սատակէր։ Այլ և յետ նորա մահուան, այլ շարադոյն հղււծ երբ և նմա ոչ կամէի երկար կեանք, և նա ևս մեռաւ։ Դուն ի նորա յաթոռն նստար, այլ առաւել շարադոյն։ Վասն այն հայցեմ յաստուծոյ, զի ողջ լինիցիս¹²։

Պարզ է, որ մենք գործ ունենք միևնույն զրույցի մեկ այլ տարբերակի հետ, որը թեև հայերեն թարգմանվել է բավական ուշ՝ XVII դարում, բայց իր արմատներով շատ ավելի հին է, կապվում է անտիկ աշխարհի հետ։ Այդ է վկայում մի ուրիշ սկզբնաղբյուր, որը նույնպես մեզ տրամադրեց Ք. Տեր-Դավթյանը։ Դա գերմաներեն մի ժողովածու է՝ թարգմանված լատիներենից, ուր հավաքված են դավաճներ և զրույցներ հռոմեական պատմությունից և առօրյա կյանքից։ Ահա այդ գրքի 97-րդ էջում գետեղված է հետևյալ զրույցը (թարգմանություն Ա. Մուշեղյանի).

Բռնակալը և իմաստուն պառավը Der Tyrann und die Kluge Alte

Վալերիոսը պատմում է. «Մինչդեռ սիրակուզացիք ցանկանում էին, որ Սիցիլիայի բռնակալ Դիոնիսիոսը շուտ մեռնի, միայն մի կին խնդրում էր Աստծուն, որ թաղավորն իրենից ավելի երկար ապրի։ Դիոնիսիոսը զարմացավ, կանչեց նրան և հարցրեց խնդրանքի պատճառը։ Նա պատասխանեց. «Երբ ես դեռ աղջիկ էի, կար մի շար բռնակալ. երբ ես ցանկացա, որ նա մեռնի, նրան ավելի շարը հաջորդեց։ Երբ ես ուզում էի դրանից էլ ազատվել, եկավ երրորդը, որն ավելի շար դուրս եկավ։ Եվ քանի որ վախենում եմ, որ քեզ կհաջորդի ավելի վատթարը, դրա համար էլ աղոթում եմ ամեն օր քո կյանքի համար։ Երբ Դիոնիսիոսն այս լսեց, հրամայեց, որ նրան այլևս չեն զանգեն¹³։

Այս հատվածի սկզբում հիշատակվող Վալերիոսը հին հռոմեացի հեղինակ Վալերիոս Մաքսիմոսն է, որի մասին ամենակարևոր տվյալները հետևյալն են. ապրել և ստեղծագործել է մեր թվարկության առաջին դարում՝ հռոմեական կայսրության սկզբնական շրջանում, ավելի կոնկրետ՝ Տիրերիոս կայսեր թագավորության տարիներին (14—37 թթ.)։ Նրա գլխավոր աշխատությունը պատմական բնույթի մի երկ է՝ «Նշանավոր գործեր և խոսքեր» ընդհանուր վերնագրով, կազմված 9 գրքից։ Այն պարունակում է Հռոմի

¹¹ Զաքարիա Բեռնատովիչի և նրա թարգմանած այս ժողովածուի մասին տե՛ս. 2. Անաս-յան. Հայկական մատենագիտություն. հ. Բ, Երևան, 1976, էջ 1470—1474։ Ք. Ս. Տեր-Դավթյան. «Բանք իմաստասիրաց»-ի մի նոր ժողովածու հայերեն թարգմանությամբ. — «Պատմա-բանասիրական հանդես», 1984, № 4, էջ 149—159։ «Հայելի վարույց», աշխատասիրություն Քնարիկ Տեր-Դավթյանի. Երևան, 1994, էջ 55—57։

¹² Տե՛ս Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 1916, էջ 421ա։

¹³ Gesia romanorum, Geschichten von den Römern. Ein Erzählbuch des Mittelalters. Erstmalig in vollständiger. Übersetzung herausgegeben von Winfried Trilzsch. Leipzig, 1979, S. 97.

պատմությունից քաղված բազմազան դրվագներ, զրույցներ և ավանդություններ, որոնք բնութագրվում են ոչ այնքան պատմական հավաստիությամբ, որքան հուզական-տպավորիչ մանրամասներով¹⁴:

Ահա Վալերիոսի հիշյալ աշխատության 6-րդ գրքից է քաղված «Բռնակալը և իմաստուն պառավը» զրույցը: Ինչպես երևում է տեքստից, սկզբնական շրջանում այն կապված է եղել իրական պատմական անձնավորության և կոնկրետ աշխարհագրական միջավայրի հետ: Դեպքը, ըստ Վալերիոսի, կատարվել է Սիցիլիայի գլխավոր քաղաք Սիրակուզայում, կղզու տիրակալ Իիոնիսիոսի կառավարման շրջանում: Անշուշտ, խոսքը վերաբերում է Իիոնիսիոս I Ավագին, որը մ. թ. ա. V—IV դարերում մի քանի տասնամյակ (400—367 թթ.) եղել է ոչ միայն Սիրակուզա քաղաքի բռնակալը, այլև պատերազմել է Կարթագենի դեմ, նվաճողական կոիվներ է մղել Սիցիլիայում և հարավային Իտալիայում, հայտնի է եղել իր դաժանությամբ¹⁵:

Այսպիսով, մեզ հետաքրքրող զրույցն իր արմատներով հասնում է անտիկ աշխարհի խորքերը (մ. թ. ա. V—IV դարեր): Նախապես այն եղել է, հավանաբար, մի իրական դեպքի արձագանք, որը չորս դար հետո Վալերիոսին է հասել կամ բանավոր զրույցի ձևով կամ որևէ միջանկյալ գրավոր հիշատակության շնորհիվ: Կասկած չի կարող լինել, որ Վալերիոս Մաքսիմոսից մինչև Հովհաննես Օրգնկացի-Սործորեցի կամ Մարտին Լութեր, այսինքն՝ 1500 տարվա ընթացքում, այս զրույցն ունեցել է նաև ուրիշ գրավոր մշակումներ, իսկ որ ավելի կարևոր է՝ այն ապրել է բանավոր խոսքում, անցել է մի սերնդից մյուսին, Իտալիայի հարավից և Արևմտյան Օվրոպայից հասել է մինչև Հայաստան, հավանաբար նաև Արևելքի այլ երկրներ: Էնդամին դժվար չէ նկատել, որ սիցիլիական զրույցի հետագա տարածման ընթացքում այն աղատվում է ինչպես աշխարհագրական տեղանքումից, այնպես էլ պատմական անունների հիշատակումից, ձեռք է բերում ավելի լայն, ընդհանրացված նկարագիր: Իսկ երևում է նաև այս հոդվածում բերված բնագրերի ժամանակագրական զուգահեռությունից: Նրանց բոլորի ելակետը այն հոգեբանական հակասական իրադրությունն է, որն առաջին անգամ հանդիպում է Սիրակուզա քաղաքում հյուսված զրույցի մեջ: Պետք է ենթադրել, որ կաթոլիկացման ուղին բռնած և Արևմտյան Օվրոպայի հետ կապերի մեջ մտած Հովհաննես Սործորեցին ևս իր «Քարոզգրքի» հենց սկզբում տեղադրած այս առակի նյութը քաղել է ոչ միայն և ոչ այնքան բանավոր զրույցներից, որքան լատինադավան կրոնավորների բերած գրքերից, որոնց թվում կարող էր լինել Վալերիոս Մաքսիմոսի ժողովածուն:

Սակայն ուղղակի գրական շփումներով և ծագումնաբանական կապերով պայմանավորված այս իրողությունների կողքին չպետք է բացառել նաև տիպաբանական ընդհանրության տարրը այս առակի գոյացման և տարածման գործում: Այլ կերպ ասած՝ տարբեր ազգային միջավայրերում իրարից անկախ էլ կարող էր առաջանալ և արմատավորվել այն պարադոքսային մտահանգումը, թե ավելի լավ է աղոթել վատ իշխանավորի կյանքը երկարացնելու համար, քանի որ նրան հաջորդելու է ավելի վատթարը: Այստեղ, ըստ երևույթին, միաձուլվում են գրական առնչության տարբեր ձևեր, որոնց միջև հստակ սահմանագիծ չկա: Օգտագործելով Հովհ. Թումանյանի վերոհիշյալ միտքը, մենք կարող ենք ասել, որ քննարկվող առակը ևս «հանրամարդկային մի ստեղծագործություն է... մի հավաքական գործ», որի վրա աշխատել ու իրենց հետքն են թողել տարբեր ազգերի ու դարաշրջանների մարդիկ:

Վերջում ավելորդ չեմ համարում ասել նաև հետևյալը: Այս հարցի քննությունը ես սկսեցի ներկայացնելու համար մի մասնավոր փաստ՝ հայկա-

¹⁴ История римской литературы. Том II, М., 1962, с. 41—44.

¹⁵ Տե՛ս, օրինակ, Советский энциклопедический словарь. М., 1982, с. 398. Всемирная история. Том II, М., 1956, с. 110—111.

կան միջնադարյան առակի և գերմանական բանաստեղծ Շամիսոյի բալլադի սյուժետային ակնհայտ նմանությունը: Սակայն հետազոտության շրջանակներն աստիճանաբար ընդլայնվեցին՝ ներառելով նույն առակի մի շարք նոր զուգահեռներ: Մեկ երկի օրինակով, ինչպես արևը մի կաթիլ օրում, մեր հայացքի առջև գծագրվեց մի ամբողջ գրական համայնապատկեր իր բազմազանությամբ և միասնությամբ: Այդ առումով տվյալ առակի միջազգային զուգահեռները (որոնք, պետք է ենթադրել, չեն սպառնում բերված օրինակներով) համեմատական գրականագիտության համար լուրջ հետաքրքրություն են ներկայացնում:

МЕЖДУНАРОДНЫЕ ПАРАЛЛЕЛИ ОДНОЙ АРМЯНСКОЙ БАСНИ

Академик НАН РА Эд. М. ДЖРБАШЯН

Резюме

Речь идет о басне «Князь и вдова», основанной на парадоксальной психологической ситуации: в ответ на гонения злого и жестокого князя вдова молится за продолжение его жизни, ибо боится, что преемник его будет еще злее. В Армении эта басня была записана в начале XIV века писателем-монахом Ованесом Ерзнкаци—Цорцореци (впервые издана Н. Я. Марром во втором томе его капитального труда «Сборники притч Вардана» в 1894 г.). Она широко вошла в повседневное сознание армянского народа, была использована Ов. Туманяном. Достоинно внимания, что этот сюжет самостоятельно присутствует в творчестве разных народов. В статье приводятся факты об обработках этого же басенного сюжета в проповедях вождя немецкой реформации Мартина Лютера (XVI в.), в балладе «Молитва вдовы» немецкого поэта Адельберта Шамиссо (первая половина XIX в.). Самым же древним изложением этого сюжета был рассказ «Тиран и мудрая старуха», записанный римским писателем I века нашей эры Валерием Максимом в его книге «Замечательные дела и слова».

INTERNATIONAL PARALLELS OF AN ARMENIAN FABLE

Academician of the NAS of the RA Ed. M. JERBASHIAN

Summary

This article is about the fable „The Prince and the Widow“ based on the paradoxical-psychological situation: in answer to persecution of the wicked and cruel prince the widow is praying for the prolongation of his life since she is afraid that his successor will get more wicked. This fable was written in Armenia in early 14th century by Hovhannes Yernkatsi-Tsortsoretsi, a writer and a priest (in the „Collections of the Parables of Vardan“, second volume, 1894, first publisher N. Ya. Marr). It was widely spread in the daily consciousness of the Armenians, it was used by Hovhannes Tumanian. This theme itself exists in the creative works of different nations. Some facts are mentioned here about the elaboration of the fable plot in the sermons of Martin Luter, leader of the German reformation (16th century) and in the ballad „The Widow's Prayings“ by the German poet Adelbert Chamisso (first half of the 19th century). The oldest version of this story was „The Tyrant and the Wise Old Dame“ recorded in the book „Wonderful Works and Words“ by Valery Maxim, a Roman writer of the 1st century A. D.